

ԱՎԱԳԱՆԻ+

2013

Association of municipal councillors of Armenia, «AVAGANI+» newspaper

թիվ 60

ԱԺ-ում տեղի ունեցավ «Կառավարման թափանցիկություն» խորագրով հայ-գերմանական համաժողովը



իրականացվում է համակարգային բարեփոխումների քաղաքականություն:

Նա շեշտեց, որ Հայաստանը կառավարման թափանցիկության մակարդակը բարձրացնելու պատրաստակամություն է հայտնել և զգալի քայլեր արել այս ուղղությամբ, թեև անելիքներ դեռ շատ կան: Եղուարդ Շարմազանովի հավաստմամբ՝ Հայաստանի հասարակությունն ու իշխանությունները, շատ լավ գիտակցելով ժողովրդավարության զարգացման ուղենիշային դերը, պատրաստակամ են շարունակական դարձնելու այս ուղղությամբ իրականացվող ծրագրերը: «Հայաստանը շատ է կարևորում կառավարման թափանցիկությունը երկրի ժողովրդավարական զարգացման ու արդյունավետ կառավարման գործում, քանզի առանց թափանցիկության չկա արդյունավետություն, իսկ առանց արդյունավետության չկա առաջընթաց», - ասաց Եղուարդ Շարմազանովը:

«Ողջունում են հայ-գերմանական համաժողովի մասնակիցներին: Համաժողովի անցկացումը երեւանում եւս մեկ անգամ վկայում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության եւ հանձինս Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ Հայաստանի Հանրապետության փոխվստահելի եւ արդյունավետ համագործակցության մասին:

Շատ ուրախ եմ, որ այս համաժողովի շարժիչ ուժը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունն է, որի հետ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովն ունի փոխգործակցության տարիների պատմություն: Ընդհանուր առմամբ, պետք է նշեմ, որ մեր երկրում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության ավելի քան 20-ամյա բեղմնավոր գործունեությունն արդյունավետ զարգացող հայ-գերմանական ջերմ հարաբերությունների խոսուն վկայությունն է:

» 2

ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Կառավարման թափանցիկություն» խորագրով հայ-գերմանական համաժողովը, որին մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, ՀՀ-ում Գերմանիայի Արտակարգ և լիազոր դեսպանը, նախարարությունների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում քննարկվեցին հանրային ֆինանսների կառավարման-տեղական ինքնակառավարման և մարզային տնտեսական զարգացման և արդարադատության համակարգում թափանցիկության վերաբերյալ հարցեր:

Համաժողովի բացմանը ելույթ ունենալով ԱԺ փոխնախագահ Եղուարդ Շարմազանովը նշեց, որ մեր երկրում

Նա համաժողովի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Յովիկ Աբրահամյանի ուղերձը:



ՏԻՄ ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումները



«Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ա-

պակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ»։ այս փաստաթղթի շուրջ էր Հանրային խորհրդի տարածքային և

տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովը գումարել նիստ՝ փոխվարչապետ Արմեն Գևորգյանի, Հան-

րային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի, ՀԻՄ անդամների, ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Տեղական ինքնակառավարման ներկա իրավիճակը և հիմնախնդիրները, համակարգի զարգացման և ապակենտրոնացման քաղաքականության հիմնական սկզբունքներն ու նպատակները, գերակա ուղղություններն ու խնդիրները ներկայացվեցին փաստաթուղթը կազմած փորձագետների կողմից: Քննարկվեցին երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգերի անցման, համայնքների կառավարման ռացիոնալ և արդյունավետ համակարգի կառուցման, ֆինանսական համահարթեցման սկզբունքով պետության կողմից համայնք-

ներին տրամադրվող դոտացիաների, համայնքների խոշորացման վերաբերյալ հարցեր:

Ինչպես և սպասվում էր, ամենաթեժ քննարկումը ծավալվեց համայնքների խոշորացման հարցի շուրջ: Ներկաներից մեկը կոչ արեց չգնալ այդ քայլին՝ հիշեցնելով խորհրդային տարիներին կատարած անհաջող փորձը: ՀԻՄ անդամ Յովիկյանն արդյունաբերական էլ նշեց, որ խնդիրն ունի սոցիալ-հոգեբանական կողմ, այն պետք է լրջորեն քննարկվի: Փոխարենը Յովիկյանն արդյունաբերական ծրագիրն իրականացնել մի քանի համայնքներում, և համեմատելով միավորված և առանձին համայնքների գործունեությունը, ընտրել առավել արդյունավետ տարբերակը:

» 2

ԱԺ-ում տեղի ունեցավ «Կառավարման թափանցիկություն» խորագրով հայ-գերմանական համաժողովը

1> Հարգելի բարեկամներ, Հայաստանում շարունակական բարեփոխումներ են իրականացվում տարբեր ոլորտներում, որոնք ընթանում են մի շարք երկրների ու միջազգային գործընկեր կառույցների գործնական աջակցությամբ: Չափազանց բարձր գնահատելով նրանց օժանդակությունն ու մեր երկրի զարգացմանը սատարելու պատրաստակամությունը՝ ցանկանում ենք ընդգծել նաև մեր հասարակության ակտիվ մասնակցությունը բարեփոխումներին, առանց որի երաշխավորված չէ այդ գործընթացների հաջող ընթացքը:

Շատ կարևոր է պետություն-հասարակություն, պետություն-մասնավոր հատված, պետություն-միջազգային կառույցներ փոխվստահելի սերտ համագործակցությունը, երբ կողմերի գործողությունները թափանցիկ են ու ընկալելի միմյանց: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն իր գործունեությամբ ձգտում է ապահովել հենց այդպիսի վստահության ու փոխըմբռնման մթնոլորտ, օրենսդրական դաշտի թափանցիկություն, համագործակցության տարբեր ձևաչափեր ոչ միայն պետական կառույցների, այլև հասարակական, այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների հետ:

Համոզված կարող եմ ասել, որ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ Հայաստանի խորհրդարանի փոխգործակցությունը ջանքերի համատեղման, փորձի փոխանակման ու միջազգային համագործակցության հաջողված օրինակ է:

Հարգելի բարեկամներ Այս համաժողովը եւս մի նպաստավոր քայլ կլինի՝ ուղղված Հայաստանի եւ միջազգային կառույցների համագործակցության խորացմանը, կառավարման թափանցիկության արդյունավետության բարձրացմանը, որից կշահեն ե՛ւ մեր պետությունն ու հասարակությունը, ե՛ւ, իհարկե, Հայաստանի առաջընթացով շահագրգիռ մեր միջազգային գործընկերները:

Եւս մեկ անգամ ողջունում եմ բոլորիդ եւ մաղթում արգասաբեր աշխատանք»:

Համաժողովի թեման հրատապ գնահատեց մեր երկրում Գերմանիայի Արտակարգ և լիազոր դեսպան Ռայմեր Մորելը: Իր ելույթում դեսպանն անդրադարձավ Հայաստանի եվրոմերձեցման քաղաքականությանը: «Հայաստանի որոշումն է եղել անցնել ասոցիացման համաձայնագրի շուրջ բանակցությունների գործընթացին, մասնավորապես Եվրամիության Հարևանության քաղաքականության շրջանակներում, և կարելի է ասել, որ Հայաստանը արդեն այս ճանապարհի կեսին է: Սա վկայում

է այն մասին, որ կա քաղաքական կամք ԵՄ իրական գործընկեր դառնալու նպատակով»:

Արդյունավետ կառավարումն այսօր միջազգային զարգացման շարժիչ ուժն է դարձել և կայուն զարգացման համար կարևորագույն նախապայման է հանդիսանում: Բոլոր երկկողմանի և բազմակողմանի կազմակերպությունները, ներառյալ՝ Եվրահանձնաժողովը, թափանցիկությունը համարում են արդյունավետ կառավարման հենասյուններից մեկը: «2011 փոփոխության օրակարգը» արդյունավետ կառավարումն՝ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական նշանակությամբ, հռչակում է որպես համապարփակ և կայուն զարգացման կենսական գործոն: 2011-2013 թթ-ին Հայաստանի համար նախատեսված 157 մլն եվրոյից բացի, ԵՄ-ն, համա-

ծայն իր «Ավելին ավելի դիմաց» մոտեցման, կներդնի լրացուցիչ 15 մլն եվրո:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի տնօրեն Դագմար Բոթը շնորհակալություն հայտնեց համաժողովը ՀՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում անցկացնելու հնարավորություն տալու համար՝ այդ փաստը բնութագրելով որպես թափանցիկության յուրօրինակ դրսևորում: Նա կարևորեց համաժողովը շահագրգիռ կողմերի մոտեցումների, փորձի ու գիտելիքների փոխանակման և Հայաստանում իրականացվող բարեփոխումների ու մարտահրավերների արձանագրման տեսանկյունից՝ արդյունավետ ու թափանցիկ կառավարումը գնահատելով որպես միջազգային զարգացման կարևորագույն նախապայման:

Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) ընկերությունը տնտեսական համագործակցության շրջանակներում տարբեր ծրագրերի միջոցով խթանում է արդյունավետ կառավարումը եւ թափանցիկությունը՝ աջակցելով տեղական ինքնակառավարման, հանրային ֆինանսների կառավարման, ինչպես նաև իրավական եւ արդարադատության ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումների իրականացմանը: Համաժողովի նպատակն էր նպաստել շահագրգիռ կողմերի միջեւ տեսանկյունների, փորձի եւ գիտելիքների փոխանակմանը, քննարկել հանրային ֆինանսների կառավարման, տեղական ինքնակառավարման եւ մարզային տնտեսական զարգացման, արդարադատության ոլորտներում Հայաստանի կողմից իրականացվող առանցքային բարեփոխումները եւ մարտահրավերները:



ՏԻՄ ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումները

1> Չես նախագահ Վազգեն Մանուկյանը կարծում է, որ նախ պետք է մտածել գյուղատնտեսության, ֆերմերային տնտեսության և կոոպերատիվների զարգացման մասին,



Ավագանու ինստիտուտի հետագա զարգացման հնարավոր ուղիների մասին զեկույցով ելույթ ունեցավ Հայաստանի ավագանիների ասոցիացիայի փոխնախագահ Արտակ Պետրոսյանը:

ինչն, ըստ նրա, բնականոն եղանակով կբերի համայնքների միավորմանը: Նա կիսեց Չես անդամ Հովհաննես Հովհաննիսյանի կարծիքը, որ դա պետք է կիրառել որոշ մարզերում, անգամ կամավոր հիմունքներով և փորձից ելնելով՝ գնալ համընդհանուր ճանապարհով:

Փոխվարչապետ Արմեն Գևորգյանը, շնորհակալություն հայտնելով Հանրային խորհրդին կազմակերպած քննարկման համար, նշեց, որ շատ է կարևորում ոլորտի բարեփոխումների վերաբերյալ առկա տրամադրությունները:

Ինչ վերաբերում է համայնքների խոշորացմանը, որի անհրաժեշտությունը, նրա կարծիքով, վաղ թե ուշ լինելու է, Արմեն Գևորգյանն առաջարկեց այն չքննարկել, քանի որ փաստաթղթում տրված է միայն խնդիրը, իսկ լուծումներ առաջարկված չեն: Նա

ներկաների ուշադրությունը հրավիրեց մի կարևոր դրույթի վրա. «Մենք երբեք չենք խոսելու գյուղերը միավորելու մասին, երբեք չենք խոսելու բնակավայրերը միավորելու մասին, մենք խոսելու ենք համայնքների խոշորացման մասին, այսինքն՝ այն վարչական գործառույթների, որոնք կատարվում են մեր բնակավայրերում և գյուղերում»:

Ընդհանուր առմամբ քննարկվող փաստաթուղթը փորձագիտական է և ներկայացնում է տեղական ինքնակառավարման համակարգի հետագա զարգացման վերաբերյալ հնարավոր մոտեցումները: «Բավականին հետաքրքիր և օգտակար փաստաթուղթ է: Մեկտեղված են ոլորտի ներկա իրավիճակի և խնդիրների լուծումների վերաբերյալ ամբողջական գաղափարներ, որով կարող է առաջնորդվել թե կառավարութ-

յունը և թե՛ իշխանությունները ոլորտում բարեփոխումներ իրականացնելիս», - նշեց Ա. Գևորգյանը:

Փոխվարչապետը կարևորեց նաև այն, որ փաստաթուղթը բաց է, որևէ որոշումով չի հաստատվելու կամ փոփոխվելու, և յուրաքանչյուր ոք կարող է դրան ավելացնել իր առաջարկներն ու դիտողությունները:

Նշեց, որ փաստաթուղթը պատրաստվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության (ՔՀՏԻԱ) ծրագրի շրջանակներում՝ մի շարք հասարակական կազմակերպությունների փորձագետների կողմից: Դրա վերաբերյալ լսումներ են անցկացվել Ազգային ժողովում, եղել են քննարկումներ Տարածքային կառավարման նախարարությունում:

Փոխհամագործակցության նոր հեռանկարներ

Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը աշխատանքային այցով գտնվում էր Ֆրանսիայի Պրովանս Ալպ կոտ դ'Ազյուր մարզում: Ա. Նալբանդյանն ընդհանուր առմամբ այցը բարձր գնահատեց՝ նշելով, որ երկու մարզերի միջև հաստատված գործակցությունն այս տարվա ընթացքում իրականացված ծրագրերից լավագույններից մեկն է:

Լոռու և ՊԱԿԿ մարզերի միջև բարեկամական կապեր են հաստատվել ավելի քան 15 տարի առաջ: Այս տարվա ընթացքում համագործակցության շրջանակներում գործնական քայլեր են ձեռնարկվել և լուրջ ծրագրեր են իրա-

սությանը, ապա վերջին տարիներին լուրջ բարեփոխումներ են իրականացվում նաև գյուղատնտեսության ոլորտում: Այստեղ կարևորվում է ոչ միայն պետական աջակցությունը, այլև արտասահմանյան երկրների, տվյալ պարագայում՝ Ֆրանսիայի ՊԱԿԿ մարզի առաջավոր փորձը՝ հատկապես անասնապահության ոլորտում:

Համատեղ քննարկման արդյունքում առավել նպատակահարմար է համարվել ոչխարաբուծության խթանումը Լոռու մարզի Տաշիրի և Սպիտակի տարածաշրջաններում:

Ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում Ա. Նալբանդյան-



Կարիքների գնահատում մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության հզորացման համար

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիրը աջակցում է ազգային, մարզային և տեղական գործընկերներին Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում համագործակցային նախաձեռնությունների իրականացման գործում, որոնք ուղղված են տեղական ինքնակառավարման զարգացմանը: Մասնավորապես, այս ծրագիրը աջակցում է տեղական ինքնակառավարման շրջանակային պայմանների բարելավմանը, անդրադառնում է մարզային կառավարման հարցերին և աշխատում է համայնքային ծառայությունների բարելավման ուղղությամբ:

Վերոնշյալ խնդիրներին հետամուտ լինելով, ԳՄՀԸ Հայաստանյան ծրագրային թիմը մի շարք գործողությունների շրջանակում իրականացրեց «Կարիքների գնահատում» երկու մեկշաբաթյա համոդիպումների տեսքով՝ տարբեր պետական և ոչ պետական կառույցների ներկայացուցիչների հետ: Համոդիպումները վարում էին Գերմանիայից հրավիրված փորձագետներ պրոֆ. Ալբե Գաբրիել և դոկտ. Ծոն Գրեյս:

Այս միջոցառումները նպատակ ունեին բացահայտել մարզային և տեղական մակարդակների միջև համագործակցության թերի կողմերը, մասնավորապես, պլանավորման և բյուջետավարման գործընթացներում, որի արդյունքների հիման վրա կմշակվի համայնքների և մարզպետարանների միջև համագործակցության այնպիսի մի ռազմավարություն, որը թույլ կտա բարելավել վերոնշյալ համագործակցության շրջանակները:

Քննարկումներին GIZ-ի ներկայացուցիչներից բացի մասնակցում էին նաև ՀՀ Տարածքային կառավարման նախարարության, մարզպետարանների, համայնքների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:



կանացվել: 2012-ի ընթացքում ֆրանսիական կողմը քանիցս այցելել է Լոռու մարզ, քննարկվել են ընթացիկ քայլերը, մշակվել համատեղ ծրագրեր՝ զբոսաշրջության, անասնապահության և ֆրանկոֆոնիայի զարգացման ուղղությամբ:

Ա. Նալբանդյանի գլխավորած պատվիրակության այցը չափազանց արդյունավետ էր մշակված ծրագրերի հետագա ընթացքը կանխորոշելու առումով: Մարզում հստակ ծրագրեր կիրականացվեն զբոսաշրջության և անասնապահության զարգացման ուղղությամբ:

Լոռու մարզը հարուստ է պատմամշակութային արժեքներով, և այստեղ հստակ նախադրյալներ կան զբոսաշրջությունը զարգացնելու համար: Ոլորտի զարգացման առումով կենտրոններ կարող են լինել Թումանյանի և Ստեփանավանի տարածաշրջանները, որոնք առավել հարուստ են պատմամշակութային կոթողներով և առանձնանում են բնության յուրահատուկ գեղեցկությամբ: Զբոսաշրջային կենտրոնն, այսուհանդերձ, կստեղծվի Ալավերդի քաղաքում:

Ինչ վերաբերում է գյուղատնտե-

սի և ՊԱԿԿ մարզի նախագահի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր, որտեղ ներառվել է դարձյալ երեք ուղղություն՝ ֆրանսերեն լեզվի զարգացումը մարզի կրթական հաստատություններում՝ որպես երկրորդ օտար լեզու, զբոսաշրջության և անասնապահության բնագավառները: Համաձայնագրում հստակ ժամկետներ են սահմանված: ՊԱԿԿ մարզը իր 2013 թվականի բյուջեով վերոնշյալ երեք ուղղությունների զարգացման նպատակով նախատեսել է 175 հազար եվրո: 2013-ի սկզբին Լոռու մարզից մասնագետներ կմեկնեն Ֆրանսիա՝ վերապատրաստում անցնելու նպատակով: Նրանք իրենց հերթին նմանատիպ դասընթացներ կանցկացնեն մեր մարզում:

Ֆրանսիայում վերապատրաստում կանցնեն նաև զբոսաշրջության մասնագետները, ովքեր իրենց փորձն ու գիտելիքները կփոխանցեն ուրիշների:

Ծրագրերի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն հասարակական կազմակերպությունների, համայնքային սեփականությունների, ֆերմերային կոոպերատիվների հետ:

ՇՈՒՐՋ 3 ՄԼՐԴ ԴՐԱՄ ՄԱՐԶՈՒՄ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ՀՀ կառավարության կողմից Գեղարքունիքի մարզում կատարված մեծածավալ ներդրումների հաշվին այս տարի իրականացվել են սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության բազմաթիվ ծրագրեր: ՀՀ պետբյուջեից տրամադրված 948,3 միլիոն դրամի հաշվին մարզի 19 հանրակրթական հաստատություններում եւ Գավառի գյուղատնտեսական քոլեջում շարունակվել են շենքերի հիմնանորոգման, իսկ Վաղաշենի միջնակարգ

դպրոցում՝ կառուցման աշխատանքները:

ՀՀ կառավարության տարբեր որոշումներով՝ մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների համար հատկացվել է շուրջ 3 միլիարդ դրամ: Տրամադրված միջոցներով կառուցվել կան հիմնանորոգվել են 11 ջրագիծ, 16 մշակույթի տուն, վեց մանկապարտեզ, ութ հանրակրթական դպրոցի շենք, երկու բազմաբնակարան շենքի տանիք, չորս համայնքնե-

րում իրականացվել են գազիֆիկացման, ութ համայնքներում՝ ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Մարզի ճանապարհաշինությանը ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 2,4 միլիարդ դրամ, ինչի շնորհիվ հաջողվել է հիմնանորոգել մարզային կամ ներհամայնքային նշանակության մոտ 23 կիլոմետր ընդհանուր երկարության ճանապարհներ, որոնք այժմ ծառայում ու սպասարկում են 14 համայնքների:

Վերակառուցվեց Դարբնիկ համայնքի գյուղապետարանի շենքը

ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի, ԱՄՆ դեսպանության Ռազմական համագործակցության գրասենյակի, Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյանի, Դարբնիկ համայնքի ղեկավար Ազատ Խաչատրյանի և համայնքի բնակիչների մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որով նշանակվեց Դարբնիկի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքների ավարտը:

Վերանորոգման աշխատանքների համար ԱՄՆ Եվրոպական հրամանատարության Ռազմական համագործակցության գրասենյակի մարդասիրական աջակցության ծրագիրը տրամադրել է 245,000 ԱՄՆ դոլար, որը ներդրվել է շենքի պատերի, պատուհանների և դռների նորացման, էլեկտրականության և ջեռուցման համակարգերի անցկացման, կոյուղու համակարգի, տանիքի վերանորոգման, ճաշարանի կառուցման համար: Ծրագրի վերահսկողությունը իրականացվել է ԱՄՆ ցամաքային ուժերի ինժեներական կորպուսի կողմից, իսկ աշխատանքները կատարել է տեղական ՍԵՍ-ԿՕ ընկերությունը:

Դարբնիկ համայնքում հանգրվանել են մեծ թվով էթնիկ հայ փախստականներ Իրաքից և Ադրբեջանից: Այս կենտրոնը ծառայելու է որպես համայնքի բնակչության կենտրոնական հավաքա-

տեղի՝ տրամադրելով առողջապահական ծառայություններ և տարածք՝ հասարակական միջոցառումների համար:

Մարզպետ Էդիկ Բարսեղյանը ի դեմս դեսպանի դրվատանքի խոսքեր ասաց կազմակերպիչներին և ներդրողներին՝ ներգաղթածներով վերաբնակեցված Դարբնիկ համայնքում վարչական շենք և գեղեցիկ ու բազմաֆունկցիոնալ կենտրոն կառուցելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի դեկտեմբերի 6-ին

«ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի «գ» կետը «ոգելից» բառից հետո լրացնել «և ալկոհոլային» բառերով, իսկ «համրային սննդի» բառերից հետո՝ «և զվարճանքի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժդ» և «ժե» կետերով. «ժդ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար. ժե) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին կետի «բգ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50 000 դրամ.».

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բդ» ենթակետով.

«բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100 000 դրամ.».

3) 4-րդ կետի 1-ին ենթակետը «ոգելից» բառից հետո լրացնել «և ալկոհոլային» բառերով.

4) 5-րդ կետի «ա» ենթակետի «տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ» բառերը փոխարինել «տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 0-350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար» բառերով.

5) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «գա» ենթակետով.

«գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000-ից 6000 դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 0-ից 1000 դրամ:».

6) 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000-100 000 դրամ:».

7) 11-րդ կետի «1.75» թիվը փոխարինել «3.0» թիվով.

8) 11.1-ին կետի «5.0» թիվը փոխարինել «7.0» թիվով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 22
Երևան, ՀՕ-225-Ն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի դեկտեմբերի 6-ին

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետով.

«4.1) տալիս է համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ոգելից» բառից հետո լրացնել «և ալկոհոլային» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 22
Երևան, ՀՕ-226-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունվել է 06.12.2012

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1-ին կետով.

«16.1) տալիս է համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն:»:

Հոդված 2. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը «ոգելից» բառից հետո լրացնել «ե ալկոհոլային» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին կետով.

«3.1) տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվություն:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 22
Երևան, ՀՕ-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի դեկտեմբերի 6-ին

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 169.14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Առանց թույլտվության Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 169.16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ և 11-րդ մասերով.

«Առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով, իսկ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով:

Սույն հոդվածի տասներորդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, իսկ քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 219.1-ին հոդվածի 2-րդ մասը «169.16-րդ» բառից առաջ լրացնել «169.14-րդ հոդվածի 4-րդ մասով,» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 244.2-րդ հոդվածի 1-ին մասը «169.14-րդ» բառից հետո լրացնել «հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ս. Սարգսյան

2012 թ. դեկտեմբերի 22
Երևան, ՀՕ-228-Ն



Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման հետագա զարգացման

COUNTERPART INTERNATIONAL




և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչության և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին և հնարավոր է, որ չհամընկնեն «Քաունթերփարթ ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Սույն փաստաթուղթը պատրաստվել է ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության (ԶՀՏԻԱ) ծրագրի շրջանակներում, ստորև նշված կազմակերպությունների փորձագետների կողմից.

- Հայաստանի ավագանիների ասոցիացիա
- Համայնքների ֆինանսիստների միավորում
- Հայաստանի համայնքների միություն
- Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
- Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոն
- «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ



Ռազմավարության համառոտ ամփոփագիրը

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և ապակենտրոնացման քաղաքականության հիմնական սկզբունքներն ու նպատակները

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ՀՀ կառավարությունը Հայաստանում տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման արդյունավետ և համակարգված քաղաքականության իրականացումն ապահովում է սույն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի միջոցով:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը 2012-2026թթ. շարունակելու է հետևողականորեն.

• կիրառել տեղական ինքնակառավարման ոլորտում միջազգային գործիքները, այդ թվում՝ էՆ տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, իշխանության ապակենտրոնացման միջազգային լավագույն փորձը՝ դրանց վերլուծության, տեղայնացման և ներդրման միջոցով:

• ապահովել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության իրականացման համար

պատասխանատու մարմինների արդյունավետ և համակարգված գործունեությունը՝ այդ մարմինների գործառնությունների տարանջատման և դրանց միջև արդյունավետ համագործակցության ապահովման միջոցով:

• համաչափորեն լուծել տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնացման քաղաքականության գերակա խնդիրները՝ վարչական և ֆինկալ ապակենտրոնացումը, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացումն ու տեղական ժողովրդավարության զարգացումը՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով:

Հայաստանում տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումների (այսուհետ՝ ՏԻՀԶԻԱՌՄ) նպատակները և խնդիրները տարանջատված են ըստ ակնկալվող արդյունքների՝ վերջնական (ազդեցության), միջանկյալ և գործոնային: Ընդ որում, յուրաքանչյուր մակարդակում ակնկալվող արդյունքներին ներկայացվող հիմնական պահանջներն են. դրանց

շոշափելիությունը, իրատեսականությունը, չափելիությունը և համադրելիությունը:

ՏԻՀԶԻԱՌՄ հիմնական նպատակը և ակնկալվող վերջնական արդյունքը Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումն է:

ՏԻՀԶԻԱՌՄ իրականացման վերջնական արդյունքները կզնահատվեն ՀՀ համայնքների բյուջետային ծախսերի և համախառն ներքին արդյունքի տոկոսային հարաբերությամբ: Վերջին երեք տարիներին այս ցուցանիշը անշեղորեն աճել է, ընդ որում 2008թ.-ի նկատմամբ 2010 թվականին այս ցուցանիշը աճել է ավելի քան 1.5 անգամ, կազմելով շուրջ 2.4%: Այդուհանդերձ, այս ցուցանիշով Հայաստանը զիջում է ԵՄ անդամ երկրներին, ինչպես նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մեծամասնությանը:

ՏԻՀԶԻԱՌՄ միջանկյալ արդյունքներն են.

• տեղական ինքնակառավարման համակարգի վարչատարածքային ամբողջականացումը (կոնսոլիդացումը).

• տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների զգալի ընդլայնումը, դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովումը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների հստակեցումը.

• համայնքի սեփականության և ֆինանսական միջոցների կառավարման արդյունավետության զգալի բարձրացումը, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության օրինակականության, հաշվետվողականության, հրապարակայնության և թափանցիկության բարձրացումը.

• միջհամայնքային համագործակցության ընդլայնումը և արդյունավետության բարձրացումը.

• տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման համակարգի կատարելագործումը, համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության ընդլայնումն ու արդյունավետության բարձրացումը.

ՏԻՀԶԻԱՌՄ իրականացման միջանկյալ արդյունքները գնահատվում են մի շարք ցուցիչներով, որոնք ներկայացված են առանձին փաստաթղթում:

ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և ապակենտրոնացման քաղաքականության գերակա ուղղություններն ու խնդիրները

ՏԻՀԶԻԱՌՄ իրականացման հիմնական խնդիրը տեղական ինքնակառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակի և մատչելիության բարձրացման նպատակով վարչական և ֆինկալ ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացման և տեղական ժողովրդավարության զարգացման միջոցների արդյունավետ կիրառումն է:

Վարչական ապակենտրոնացման ուղղությամբ գերակա են. ՀՀ վարչատարածքային բաժանման օպտիմալացումը, միջհամայնքային համագործակցության խթանումը և ՏԻՄ-երի իրավասությունների ու պարտականությունների հստակեցումը:

ՀՀ վարչատարածքային բաժանման օպտիմալացման ուղղությամբ, մասնավորապես կարևորվում են. ՀՀ համայնքների խոշորացման հայեցակարգի մշակումը՝ ընտրված առանձին մարզերում համայնքների խոշորացման փորձնական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծության և գնահատման, ձեռք բերված փորձի ամբողջականացման հիման վրա, հասարակության լայն շրջանակների ներգրավմամբ ռազ-

մավարության հանրային քննարկումն ու հաստատումը, ՀՀ ամբողջ տարածքում կամավորության և պարտադիր սկզբունքների համադրությամբ համայնքների խոշորացման աստիճանական փաստացի իրականացումը:

Անհրաժեշտ է Հայաստանում անցում կատարել երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի: Դրա հետ կապված անհրաժեշտաբար կհստակեցվեն տարածքային և համայնքային ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու գործառնությունները և նրանց միջև լիազորությունների բաշխումը:

Միջհամայնքային համագործակցության խթանման ուղղությամբ կարևորվում են. միջհամայնքային միավորումների ձևավորումը, միջհամայնքային միավորումների և դրանց կազմում ընդգրկված համայնքների լիազորությունների, կառավարման մարմինների, նրանց փոխհարաբերությունների, սեփականություն համարվող գույքի, բյուջեների եկամուտների աղբյուրների և ծախսային ուղղությունների օրենսդրորեն կարգավորումը, պետական բյուջեի միջոցներով այդ կառույցների ձևավորմանը և կայացմանն օժանդակությունը:

ՏԻՄ-երի իրավասությունների ու պարտականությունների սահմանման կարգի հստակեցման ուղղությամբ կարևորվում են. ՏԻՄ-երին փոխանցման ենթակա նոր լիազորությունների ոլորտների, ժամկետների, փուլերի սահմանումը, լիազորությունների իրականացման օրենսդրական կարգավորումը, ծառայությունների մատուցման չափորոշիչների և լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողության սահմանումը, ՏԻՄ-երի և պետական կառավարման մարմինների փոխհարաբերությունների օրենսդրական կարգավորումը:

Ֆինկալ ապակենտրոնացման ուղղությամբ գերակա են. համայնքի ֆինանսական անկախության աստիճանի բարձրացումը, համայնքային բյուջեների մուտքերի կայունության և բազմազանության ապահովումը, համայնքներում համայնքի ֆինանսների կառավարման, ինչպես նաև ֆինանսական հսկողության և վերահսկողության արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության, բարձրացումը, ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների

ապահովումը, համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի կատարելագործումը և արդյունավետության բարձրացումը, փոխատվական կապիտալի շուկայում համայնքների գործունեության զարգացումն ու խթանումը:

Համայնքի ֆինանսական անկախության աստիճանի բարձրացման և համայնքային բյուջեների մուտքերի կայունության և բազմազանության ապահովման տեսանկյունից կարևորվում են. համայնքներում համայնքային սեփականություն հանդիսացող գույքի (շենք, շինություն, հող) գույքագրման, պետական գրանցման աշխատանքների կազմակերպումն ու ամբողջական իրականացումը, համայնքային գույքի կառավարման միասնական համակարգերի մշակումն ու ներդրումը, համայնքների բյուջեներին պետական բյուջե մուտքագրվող հարկերից և պարտադիր վճարներից մասհանումների տոկոսաչափերի օրենսդրորեն ամրագրումը, համայնքներում տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման դիմաց վճարների տվյալների բազաների վարման և գանձ-

Ռազմավարության համառոտ ամփոփագիրը

5>

ման միասնական տեղեկատվական ավտոմատացված համակարգի մշակումը և ներդրումը, տեղական տուրքերի և վճարների մասին օրենսդրության կատարելագործումը, հարկային օրենսդրության մեջ տեղական նոր հարկատեսակների ամրագրումը և ՏԻՄ-երին առանձին հարկերի գծով դրույքաչափերի սահմանման իրավասության տրամադրումը, օժանդակությունը համայնքների տնտեսական զարգացմանը, տնտեսական գործունեության օրենսդրական հիմքերի համապատասխանեցումը ՀՀ օրենսդրությանը և կատարելագործումը:

Համայնքներում հանրային ֆինանսների կառավարման, ինչպես նաև ֆինանսական հսկողության և վերահսկողության արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության բարձրացման տեսանկյունից կարևորվում են. համայնքի ֆինանսներին վերաբերող օրենսդրության կատարելագործումն ու անհամապատասխանությունների ու հակասությունների վերացումը, ռազմավարական պլանավորման և կառավարման նոր համակարգի մշակումն ու ներդրումը, ծրագրային և բյուջետային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման, պարբերական վերանայման և վերահսկման մեթոդական ցուցումների և ուղեցույցների մշակումը և ներդրումը, պետական/մարզային զարգացման և համայնքների զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովումը, համայնքներում ծրագրային և/կամ ըստ արդյունքների բազմամյա բյուջետավարման նոր համակարգի և բյուջետային գործընթացը դրա շրջանակներում կազմակերպելու ընթացակարգերի ներդրումը, պետական, մասնավոր, տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ներդրումային, տեխնիկական աջակցության և զարգացման ծրագրերում ներգրավվելու ՏԻՄ կարողությունների և հմտությունների զարգացումն ու հզորացումը, համայնքային գնումների համակարգի կատարելագործումը, շահերի բախման ու հայտարարագրման պահանջների, հրապարակային սակարկությունների և այլ ընթացակարգերի սահմանումը, գնումների գործընթացում համայնքների ղեկավարների լիազորությունների հակակշռումը և անհատական պատասխանատվության սահմանումը, գնումների գործընթացում մրցակցության խրախուսումը, ընթացակարգերի կիրառման և պահ-

պանման նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը, համայնքներում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրումը, համայնքներում ներքին և արտաքին աուդիտի համակարգերի ներդրումն ու օրենսդրական հիմքերի ապահովումը, մեթոդական աջակցության ապահովումը, պետական վերահսկողության կատարելագործումը, քաղաքացիների մասնակցության, մոնիթորինգի և զննատան համակարգերի ներդրումը, համայնքային ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացումն ու ուսուցումը:

ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովման ուղղությամբ կարևորվում են. ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացմանը համարժեք ֆինանսական միջոցներով համայնքների ապահովման օրենսդրական երաշխիքների ամրագրումը, ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման արժեքների հաշվարկման մեթոդաբանությունների մշակումն ու ընդունումը, պահանջվող ֆինանսական միջոցների նվազագույն ծավալների սահմանումը, այդ մեթոդաբանությունների հիման վրա ՏԻՄ-երի պարտադիր և պատվիրակված լիազորությունների իրականացման և ֆինանսավորման իրավական հիմքերի ապահովումը:

Համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ կարևորվում են. համայնքների ֆինանսական համահարթեցման նոր սկզբունքների ամրագրումը, առավել նպատակային և հասցեական ընթացակարգերի ներդրումը, պետական այլ դրույքաչափերի ու ֆինանսական օժանդակության, նպատակային հատկացումների (սուբվենցիաների) տրամադրման օրենսդրական կարգավորումը, նպատակային հատկացումների հայտերի և ծրագրերի կազմման չափորոշիչների սահմանումը, դրանց մասին որոշումների կայացման հրապարակայնության, թափանցիկության և մասնակցության ապահովումը:

Փոխառվական կապիտալի շուկայում համայնքների գործունեությունը զարգացնելու և խթանելու ուղղությամբ կարևորվում են. համայնքների վարկավորման, արժեթղթերի շուկայում լիարժեք և արդյունավետ մասնակցության օ-

րենսդրական կարգավորումը, համայնքի ֆինանսական վիճակի վերլուծության, վարկունակության գնահատման և վարկավորման բնագավառներում համայնքների կարողությունների և ունակությունների զարգացումը, համայնքային տնտեսությունում վարկային ծրագրերի ներդրումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների հզորացման ուղղությամբ զեռակա են. ՏԻՄ ընդհանուր իրավասությունների և լիազորությունների համակարգի կատարելագործումը, համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտների ու դրանց միջև զսպումների և հակակշիռների համակարգի կատարելագործումը, ՏԻՄ-երի կարողությունների զարգացումը և համայնքային ծառայության համակարգի ամբողջականացումը, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության, համայնքի և համատիրության միջև փոխհամագործակցության արդյունավետության բարձրացումը:

ՏԻՄ ընդհանուր իրավասությունների և լիազորությունների համակարգի կատարելագործման տեսանկյունից կարևորվում են. հանրային կառավարման մարմինների միջև լիազորությունների բաշխման վերանայումը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների օրենսդրորեն հստակեցումը, ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ պետական վերահսկողության կարգավորումը, պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պետական վերահսկողության կարգի և մարզպետի կողմից վարչական հսկողության իրականացման ընթացքում ձեռնարկվող միջոցների օրենսդրորեն սահմանումը, վերահսկողության ընթացակարգերի ներդրումը, հանրային կառավարման մարմինների միջև պատասխանատվության արդյունավետ բաշխումը, մարզպետի կողմից ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վարչական հսկողության գործառնությունների ամբողջականացումը, մարզպետարանների և նրանց ենթակառուցվածքների վերահսկողական կարողությունների բարելավումը, ՏԻՄ-երի ընդհանուր իրավասությունների տարանջատումն ու հստակեցումը, լիազորությունների իրականացման օրենսդրական հիմքերի ապահովումը, ինչպես նաև համայնքի բնակչության, համայնքային հաստատությունների ու քաղաքացիական հասարակության կառույցների առավել ներգրավվածության ապա-

հովումը տեղական ինքնակառավարման գործընթացներում:

Համայնքի ղեկավարի և ավագանու ինստիտուտների, դրանց միջև զսպումների և հակակշիռների համակարգի կատարելագործման ուղղությամբ կարևորվում են. ՏԻՄ-երի լիազորությունների և գործառնությունների հստակեցումը և հակասությունների վերացումը, համայնքի ավագանու՝ որպես ներկայացուցչական մարմնի կայացումը, համայնքի ավագանու ձևավորման ընտրական օրենսդրության կատարելագործումը, ավագանու անդամության թեկնածուներին ներկայացվող պահանջների հստակեցումը, ավագանու ներքին կազմակերպական կառուցվածքը և գործունեության կանոնակարգերի ու ընթացակարգերի հստակեցումը, դրանց հանրային լայն քննարկումը և ՀՀ համայնքներում ներդրումը, ավագանու գործունեության պայմանների բարելավումը:

ՏԻՄ-երի կարողությունների զարգացման և համայնքային ծառայության համակարգի ամբողջականացման ուղղությամբ կարևորվում են. համայնքների աշխատակազմերի օպտիմալ կառուցվածքների մոդելների մշակումն ու ներդրումը, ՏԻՄ-երի կառավարման գիտելիքների ու հմտությունների զարգացումը, համայնքի ավագանու անդամների և համայնքային ծառայողների համար համայնքային ծառայության համակարգի վերաբերյալ ուսուցման ծրագրերի կազմակերպումը, համայնքային ծառայության միասնական պաշտոնների համալրման մրցույթների թափանցիկությունն ապահովող ընթացակարգերի ներդրումը, համայնքների տվյալների տեղեկատվական միասնական բանկի ստեղծումը, ՏԻՄ-երում կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների և համակարգային ներքին ցանցերի, համայնքային կառավարման միասնական համակարգերի ներդրումը, տարածքային կառավարման միասնական տեղեկատվական համակարգերում դրանց ներառումը և ինտեգրումը, համայնքների տեղեկատվական համակարգերն օգտագործող աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման ծրագրերի իրականացումը, երևում և մարզերում հանրային ծառայությունների մատուցման «Մեկ պատուհանի սկզբունքով» գործող ընդունարանի և քաղաքացիների սպասարկման գրասենյակների զարգացումը:

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԿՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ (ՈՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՈՒՄ) ԳԵՏՆԱՆՇՄԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Ղ Մ Է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի (որի համար նախատեսվում է տեղական տուրքի գանձում) գետնանշման ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 10-ի N 1281 -Ն որոշման

Ձ Ե Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱԿՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ (ՈՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԳԱՆՁՈՒՄ) ԳԵՏՆԱՆՇՄԱՆ

1. Փողոցի երթևեկի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղի զբաղեցրած տարածքն առանձնացվում է փողոցի երթևեկի հարևան գոտուց՝ ավտոկայանատեղի երկայնական սահմանագծի կարմիր գույնի խզվածքներով գետնանշմամբ: Եթե փողոցի երթևեկի մասում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղում թույլատրվում է ավտոտրանսպորտային միջոցների՝ մինչև երեք նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ կայանում, ապա ավտոկայանատեղի տարածքն առանձնացվում է նաև լայնակի սահմանագծով՝ կարմիր գույնի հոծ գետնանշմամբ:
2. Հրապարակներում կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերը սահմանազատվում են կարմիր գույնի գետնանշմամբ՝ ավտոտրանսպորտային միջոցների մուտքի-ելքի ու-



ղիների կողմից՝ խզվածքներով, ավտոկայանատեղի տարածքի սահմանագիծը հրապարակում՝ հոծ գծով:

3. Ելնելով ավտոկայանատեղի տարածքի առանձնահատկություններից և նպատակահարմարությունից, կարող է իրականացվել վճարովի ավտոկայանատեղի զբաղեցրած ամբողջ տարածքի՝ կարմիր ներկանյութով, այդ թվում՝ կարմիր գույնի ասֆալտաբետոնյա կամ այլ ծածկույթներով սահմանազատում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

- 1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղի կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) համայնքի ավագանու կողմից սահմանված վճարովի ավտոկայանատեղերի (այսուհետ՝ ավտոկայանատեղ) կազմակերպման ու գործունեության հետ կապված իրավահարաբերությունները:
2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են՝
1) ավտոկայանատեղ՝ ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար առանձնացված՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կահավորված բաց հարթակ (փողոցի մաս, հրապարակ), որտեղ ավտոտրանսպորտային միջոցների կայանումը կազմակերպվում է առանց պահպանման ծառայություն մատուցելու:
2) ավտոկայանատեղի կազմակերպիչ՝ համայնքի ղեկավար կամ համայնքային ենթակայության կազմակերպություն կամ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը, համայնքի ավագանու որոշման հիման վրա, համայնքի ղեկավարի հետ կնքած պայմանագրի համաձայն կազմակերպում է ավտոկայանատեղի գործունեությունը և ավտոկայանատեղի համար գանձում է տուրք:
3) ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը վճարված տուրքի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունքը չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:
4) ավտոկայանման գործունեություն՝ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տուրքի գանձման հետ կապված՝ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործունեություն:
5) հատուկ տարածք՝ ավտոկայանատեղում կայանման պահանջների խախտման հետևանքով ավտոկայանատեղից տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների պահպանման (տեղավորման) համար նախատեսված մասնագիտացված տարածք, որը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի կամ համայնքի կողմից լիազորված կազմակերպության կողմից:

II. ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

- 3. Ավտոկայանատեղերի կազմակերպումն իրականացվում է համայնքի ավագանու որոշման հիման վրա: Ավտոկայանատեղերի տեղաբաշխումը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ: Եթե ավտոկայանատեղերը պետք է կազմակերպվեն զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում, ապա այդ ավտոկայանատեղի տեղաբաշխումը համաձայնեցվում է նաև համապատասխան մարմինների հետ:
4. Ավտոկայանատեղի գործունեությունը կազմակերպվում է համայնքի ղեկավարի կամ համայնքային ենթակայության կազմակերպության կողմից: Համայնքի ավագանու որոշմամբ ավտոկայանատեղի կազմակերպելու իրավասությունը կարող է վերապահվել նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնք գանձում են տուրք՝ համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրին համապատասխան:
5. Ավտոկայանատեղի կազմակերպիչը տուրքը գանձում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:
6. Ավտոկայանատեղեր կարող են կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, շինարարական և այլ նորմերի պահանջներին համապատասխան, ընդ որում՝
1) փողոցի երթևեկելի գոտում՝ միայն երթևեկելի մասի եզրի երկարությամբ ավտոտրանսպորտային միջոցների հաջորդական տեղաբաշխմամբ՝ պայմանով, որ չարգելափակվեն բակային մուտքերը:
2) փողոցի երթևեկելի մասի տեղային լայնացում ունեցող հատվածում՝ ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշման պահանջներին համապատասխան:

III. ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- 7. Ավտոկայանատեղերը պետք է ունենան հետևյալ կահավորումը՝
1) տարածքի մակերեսի կոշտ պատվածք, ավտոկայանատեղի սահմանների սահմանագատում փողոցի երթևեկելի մասում, տուրքի գանձման, տարածքի վերահսկման և երթևեկության կազմակերպման այլ տեխնիկական միջոցների առկայություն (հնարավորության դեպքում), կառուցվածքային տարրերով տարանջատում:
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան ձևի գետնանշում:
3) ավտոկայանատեղի տարածք ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու, տարածքից դուրս գալու մատչելի և անվտանգ ուղիներ:
4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան՝ «Կայանման տեղ» և «Տրանսպորտային միջոցների կանգնեցման ձևը կայանման տեղերում», իսկ վճարովի ավտոկայանատեղերի համար՝ նաև «Վճարովի ծառայություններ» ճանապարհային նշաններ:
5) վճարովի ավտոկայանատեղի համար տեղեկատվական ցուցանակ, որը պետք է պարունակի ավտոկայանատեղի կազմակերպիչ լրիվ անվանումը կամ անունը և ազգանունը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ավտոկայանատեղի աշխատանքային ռեժիմը, ավտոկայանման ծառայության մատուցման դիմաց սահմանված տուրքի չափերը, ծառայողական ավտոկայանատեղի համար՝ նաև «Ծառայողական» ցուցանակ:
8. Ավտոկայանատեղի կահավորման և գետնանշման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան՝ ավտոկայանատեղի կազմակերպիչի կողմից, իր միջոցների հաշվին:
9. Ավտոկայանատեղի ծառայությունից օգտվողների համար ներկայացվող տեղեկատվությունը, ավտոկայանատեղից օգտվելու պայմանների վերաբերյալ ցուցանակները պետք է տեղադրվեն մատչելի և տեսանելի վայրերում:

10. Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պահանջով՝ նրանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցի կայանման մասին տրամադրվում է տեղեկանք՝ հաստատված ավտոկայանատեղի կազմակերպիչի կողմից: Տեղեկանքում պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները՝

- 1) ավտոկայանատեղի կազմակերպիչի անվանումը կամ անունը և ազգանունը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
2) ավտոկայանատեղի գտնվելու վայրը:
3) ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, հաշվառման համարանիշը:
4) ավտոտրանսպորտային միջոցի կայանման ընդունման ամսաթիվը, կայանման սկիզբը, ավարտը, տևողությունը:
5) վճարված տեղական տուրքի գումարի չափը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՑ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

- 1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոկայանատեղից ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրության ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1282 - Ն որոշման
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՑ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԸ ՀԱՏՈՒԿ ՏԱՐԱԾՔ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
20 թ.
Համանպե «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի՝
մակիշի հաշվառման համարանիշով
ավտոտրանսպորտային միջոցը
(նշել տվյալները ապրանքային միջոցի պատշգի ներքևից, սակայն պետք է նշել արտադրիչի թվաթիվը)
կայանատեղից
(կայանատեղի գտնվելու վայրը կամ համայնքը)
(նշել հատուկ տարածք տեղափոխելու պատճառը)
ավտոկայանատեղի կազմակերպիչ կամ նրա կողմից լիազորված անձ
(անուն, ազգանուն, փաստաթղթի համարը)
կողմից ժամը -ին տեղափոխվել է ժամը -ին համանշվել է
հատուկ տարածք:
(անուն, ազգանուն)
Հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցն ընդունեցի, առուցեցի, որ ավտոտրանսպորտային միջոցը համապատասխանում է [], չի համապատասխանում [] արտադրիչի նկարագրին (արտադրիչի թվաթիվներին)
(դաշտը ցրվել է անհամապատասխանություններ լինելու դեպքում)
ընդունման վերաբերյալ հաշվառման մատչանի _____ էջի _____ տողում կատարեցի գրառում իմ՝ հատուկ տարածքի հսկիչ _____ -ի կողմից:
(անուն, ազգանուն)
Այլ նշումներ
Արձանագրությունն ստորագրեցին՝
(ավտոտրանսպորտային միջոցի կազմակերպիչի կողմից կամ անձի)
(հատուկ տարածքի) հսկիչ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2012

ՀՀ Տավուշի մարզի Բարեկամական համայնքի ավագանու անդամների վերբերյալ ընտրված 23.09.2012թ.
 ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 421
 Վավեր քվ.՝ 201, անվավեր՝ 14, մարված՝ 206
 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 6,
 ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 90.1 %-ը:

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԵՍԱՅԱՆ ԼԵՎՈՆ ՎԱՍԻԼԻ	07.11.1978թ.	ԲՀԿ	59 / 29.3
2	ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ ԱՐԱՅԻԿԻ	23.05.1969թ.	ՀՀԿ	31 / 15.4
3	ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՍԵՐՊԵՅԻ	11.07.1981թ.	անկուսակց.	38 / 18.9
4	ՄԻՐՁՈՅԱՆ ՋՈՆԻԿ ՎԱՍՍԱՐԻ	23.03.1970թ.	անկուսակց.	33 / 16.4
5	ՄՈՒՔԵԼՅԱՆ ԱՐՏԱԿ ՄԱՐՏԻԿԻ	01.11.1983թ.	անկուսակց.	20 / 9.9

ՀՀ Տավուշի մարզի Բարեկամական համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 421
 Վավեր քվ.՝ 202, անվավեր՝ 13, մարված՝ 206,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՐԱՋՅԱՆ ԳԱՐԻԿ ՆԻԿՈԼԻ	17.02.1981թ.	ՀՀԿ	188 / 93.06
2	ՄՈՒՔԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻԿԻ	18.11.1981թ.	անկուսակց.	14 / 6.9

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 7 726
 Վավեր քվ.՝ 4 632, անվավեր՝ 141, մարված՝ 2 953,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՂԱՍՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ ԱՐԱՍԱՅԻՍԻ	24.06.1958թ.	ԲՀԿ	741 / 15.9
2	ՄԱՆՈՒՀԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱԼԻՆԻ	27.04.1965թ.	ՀՀԿ	2 825 / 60.9
3	ՇԱՐՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՄՊԱՐՏԱԿԻ	03.08.1963թ.	ՀՀԿ	1 065 / 22.9

ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ավագանու անդամների վերբերյալ ընտրված 23.09.2012թ.
 ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 2 032
 Վավեր քվ.՝ 1 211, անվավեր՝ 53, մարված՝ 768
 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 12,
 ընտրված ավագանու 7 անդամները ստացել են վավեր ձայների 77.4 %-ը:

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՍՏԻԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՎՈՐԻ	11.02.1975թ.	անկուսակց.	127 / 10.4
2	ԲԱՀԱՂՈՒՐՅԱՆ ՄԵԼԻՍԱՐ ՄԻՇԱՅԻ	26.08.1978թ.	ՀՀԿ	180 / 14.8
3	ԴԱՎԹՅԱՆ ՄԵԼԻՍԱՐ ՈԱՅԻԿԻ	23.04.1989թ.	անկուսակց.	139 / 11.4
4	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՌԲԵՐՏԻ	03.08.1978թ.	ԲՀԿ	107 / 8.8
5	ՄԻՐՁՈՅԱՆ ՄԵՐԵ ԱՐԱՅԻԿԻ	14.03.1986թ.	ԲՀԿ	135 / 11.1
6	ՅԱՐԱՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ ԱՐԾԿԻ	25.04.1977թ.	անկուսակց.	139 / 11.4
7	ՓԱՐՍԱՂԱՆՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԳԱՌՆԻԿԻ	22.04.1974թ.	անկուսակց.	110 / 9.0

ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 2 032
 Վավեր քվ.՝ 1 224, անվավեր՝ 40, մարված՝ 768,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՅՎԱԶՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՈՎԻԿԻ	28.03.1979թ.	անկուսակց.	469 / 38.3
2	ԵԳՆԱՅԱՆ ԳԻԳՈԼ ՈԱՋՄԻԿԻ	11.02.1964թ.	ՀՀԿ	742 / 60.6

ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 2 336
 Վավեր քվ.՝ 1 360, անվավեր՝ 69, մարված՝ 907,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ ՇԱՀՈՅԻ	28.12.1949թ.	ՀՀԿ	758 / 55.7
2	ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ	11.02.1970թ.	ՀՀԿ	602 / 44.2

ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի ավագանու անդամների վերբերյալ ընտրված 23.09.2012թ.
 ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 2 336
 Վավեր քվ.՝ 1 364, անվավեր՝ 67, մարված՝ 905
 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 10,
 ընտրված ավագանու 9 անդամները ստացել են վավեր ձայների 96.8 %-ը:

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱՅԻ	11.12.1981թ.	անկուսակց.	140 / 10.2
2	ԱՅՎԱԶՅԱՆ ՄԱՐՏԻԿ ՈԱՋՄԻԿԻ	01.03.1959թ.	ՀՀԿ	142 / 10.4
3	ԱՎԱԳՅԱՆ ՌՈՒԶԱՆ ՈԱՅԻԿԻ	02.05.1967թ.	ՀՀԿ	118 / 8.6
4	ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՈՒՇ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ	24.12.1952թ.	անկուսակց.	95 / 6.9
5	ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴՈՒՅԻ ՎԱԶԻԿԻ	16.06.1979թ.	ՀՀԿ	113 / 8.2
6	ՀԱՍՋՅԱՆ ՄԵԼԻԿ ՀԱՎՈՐԻ	19.09.1974թ.	ՀՅԴ	122 / 8.9
7	ՄԵԼԻՔԵԿՅԱՆ ՎԱՅՐԱՄ ԳԱՐԻԿԻ	02.07.1976թ.	ՀՀԿ	381 / 27.9
8	ՋԱՄԱԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԳԱՌՆԻԿԻ	07.11.1974թ.	ԲՀԿ	97 / 7.1
9	ՎԱՆԵՍՅԱՆ ԱՇՈՏ ԱՐՏՈՒՇԻ	05.12.1958թ.	ՀՀԿ	112 / 8.2

ՀՀ Տավուշի մարզի Դեղձավան համայնքի ավագանու անդամների վերբերյալ ընտրված 23.09.2012թ.
 ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 307
 Վավեր քվ.՝ 130, անվավեր՝ 6, մարված՝ 171
 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 5,
 ընտրված ավագանու 5 անդամները ստացել են վավեր ձայների 100 %-ը:

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ԼՅՈՎԱՅԻ	11.08.1976թ.	ԲՀԿ	24 / 18.4
2	ԹՈՐՈՍՅԱՆ ԴԵՆԻՍ ԳԱԳԻԿԻ	22.07.1989թ.	ՀՀԿ	30 / 23.0
3	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳԱՐԵԳԻՆԻ	12.09.1954թ.	ՀՀԿ	16 / 12.3
4	ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ԳՈՐԳԵՆԻ	09.09.1950թ.	անկուսակց.	14 / 10.7
5	ՋԱՎԱԴՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԱՊՐԵՍԻ	16.09.1985թ.	ԲՀԿ	43 / 33.0

ՀՀ Տավուշի մարզի Դեղձավան համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 307
 Վավեր քվ.՝ 132, անվավեր՝ 4, մարված՝ 171,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ ՈԱՅԻԿԻ	05.05.1985թ.	ՀՀԿ	124 / 93.9

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու անդամների վերբերյալ ընտրված 23.09.2012թ.
 ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 14 822
 Վավեր քվ.՝ 8 066, անվավեր՝ 240, մարված՝ 6 516
 Ավագանու անդամության թեկնածուների թիվը՝ 34,
 ընտրված ավագանու 15 անդամները ստացել են վավեր ձայների 59.8 %-ը:

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՍՍՏՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԼԵՎՈՆԻ	25.01.1985 թ.	ՀՅԴ	332 / 4.1
2	ԲԱԼԻՆՅԱՆ ՈԱՋՄԻԿ ՌՈՒՍԼԱՆԻ	11.01.1979թ.	անկուսակց.	455 / 5.6
3	ԳՐԻԳՈՐՅԱՆ ՊԱՐԳԵՎ ՄՈՍԻ	26.09.1964թ.	անկուսակց.	264 / 3.2
4	ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ ՈԱՋՄԻԿԻ	14.11.1970թ.	անկուսակց.	408 / 5.0
5	ԴԱՎԹՅԱՆ ՍԱՍՎԵԼ ԱՐԾՐՈՒՆԻ	07.09.1968թ.	ՀՀԿ	401 / 4.9
6	ԹԱՄԱՐՅԱՆ ԳՐԵՏԱ ՄՐԱՅԻԼԻ	18.06.1959թ.	ՀՀԿ	235 / 2.9
7	ՀԱՆՎԵՐԴՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎՈԼՈՂՅԱՅԻ	05.01.1972թ.	ՀՀԿ	438 / 5.4
8	ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՇՎԵՐԻԿԻ	09.11.1971թ.	ԲՀԿ	259 / 3.2
9	ԴԱՋԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՌՈՒԲԵՆԻ	21.07.1984թ.	անկուսակց.	283 / 3.5
10	ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՇԱՀԵՆԻ	16.04.1974թ.	ՀՀԿ	226 / 2.8
11	ՄԱՆԹԱՇՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԳԱՌՆԻԿԻ	31.08.1981թ.	անկուսակց.	341 / 4.2
12	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՍՈՆ ՀՐԱԶԻԿԻ	03.06.1967թ.	ՕԵԿ	310 / 3.8
13	ՄԿՐՏՈՒՅԱՆ ՍԱՀԱԿ ՍԵՐՊԵՅԻ	30.08.1968թ.	ՀՀԿ	269 / 3.3
14	ՄԱՅՏԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎՈԼՈՂՅԱՅԻ	14.01.1961թ.	ՀՀԿ	333 / 4.1
15	ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՕՆԻԿԻ	19.09.1970թ.	անկուսակց.	263 / 3.2

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 14 822
 Վավեր քվ.՝ 8 032, անվավեր՝ 243, մարված՝ 6 547,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՌՈՒՍԱՄԻ	15.11.1978թ.	անկուսակց.	428 / 5.3
2	ՍԱՀԱԿԱՆՅԱՆ ԺՈՐԱ ՄԿՐՏԻԶԻ	31.07.1946թ.	ԲՀԿ	2 824 / 35.1
3	ՍԱՆԹՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՎՈՎԱՅԻ	04.04.1968թ.	ՀՀԿ	4 688 / 58.3

ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի ղեկավարի ընտրության մասին Օրը՝ 23.09.2012թ., ՏԸՀ հատկացված քվեաթերթիկների թիվը՝ 2 664
 Վավեր քվ.՝ 1 733, անվավեր՝ 49, մարված՝ 882,

h/h	Թեկնածուներ - Ազգանուն, Անուն, Հայրանուն	Ծննդյան օր, ամիս, թիվ	Կուսակցականություն	Ստացած ձայների թիվը/տոկոսը
1	ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ ԳՐԻՇԱ ԳՐԻԳՈՐԻ	20.06.1955թ.	անկուսակց.	84 / 4.8
2	ՀԱՎՈՐՅԱՆ ԱՆԱՍՏԱՍ ԼԵՎՈՆԻ	01.01.1948թ.	ՀՀԿ	636 / 36.6
3	ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԹՈՌՈՆԻԿ ՕՆԻԿԻ	01.05.1975թ.	անկուսակց.	304 / 17.5
4	ՇԱՀԻՆՅԱՆ ՇԱՀԵՆ ՕՆԻԿԻ	27.10.1964թ.	ՀՀԿ	701 / 40.4

Սույն հրատարակումը հնարավոր է դարձել իրականացնել «Քաունթերփարթ ինթերնեշնլի» Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և ԱՄՆ ՄԶԳ No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակներին և ճրանց պատասխանատվության ներքո են, հնարավոր է չհամընկնեն «Քաունթերփարթ ինթերնեշնլի» Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ ՄԶԳ-ի հետ:

Համարի պատասխանատու՝ Տ. Նիկողոսյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ:
 Հասցեն՝ Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ 58-77-41:
 Գրանցման վկայական՝ ՕՅԱ 053385:
 Ծավալը՝ 2 տպ. մամուլ:
 Տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 1500:
 Հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետին:
 Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Մեջբերելիս հղումը «Ավագանի+»-ին պարտադիր է:
 էլ. փոստ՝ avagani@dolphin.am www.avagani.am
 Թերթի տարածումը՝ անվճար: